

ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԿԵՆՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՊ ԼՈՒՃՈՒՄՆԵՐ
ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԵՐ, 100-ԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Չնայած մայրաքաղաքից ամենամեծ հեռավորությանը՝ Հայաստանի սահմանամերձ Սյունիքի մարզում հաջողվել է վերջին 10 տարիներին տնտեսության մեջ հիմնել նոր արտադրություններ, կառուցել, հիմնանորոգել կրթօջախներ և բուժհաստատություններ, անգամ խորհրդային տարիներին չգազիֆիկացված համայնքները գազիֆիկացնել, վերակառուցել ու հիմնանորոգել ճանապարհային, ջրային ենթակառուցվածքներ, կենսակոչել սոցիալական մեծաթիվ ծրագրեր, ընդգծել լեռնաշխարհի անկրկնելի ու գրավիչ կերպարն ու ակնհայտորեն խթանել Սյունիքում տուրիզմի զարգացումը: Մարզն ունի ռազմավարական նշանակություն, և չնայած քաղաքական տարբեր շահերի դրսևորմանը, մոտ 10 տարում լուծում են ստացել 1000-ավոր խնդիրներ: Մարզում առաջընթացի այս ուղին շարունակվում է նոր ծրագրերով, ձեռնարկներով՝ 2004թ.-ից 9 տարի մարզը ղեկավարած և այս տարի վերանշանակված մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետևողականությամբ, մարդ, ով մարտնչել է հանուն հայրենիի, միջոցներ ներդրել՝ ի շահ ազատագրական պայքարի, տնտեսության, հասարակության առողջապահության, մտավորականության: Նա համահեղինակ է ու հովանավոր մի շարք գրքերի, Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ՝ թուրքական ժխտողականության դեմ ուղղված ‘Սև գրքի’ շնորհանդեսը ևս հովանավորել է նա: Սյունեցիները գնահատանքով են խոսում Ս. Խաչատրյանի նվիրման. մարդկային արժանիքների, քաղաքական փորձառության մասին, որ կարևոր գործոններ են Սյունիքն ամուր հիմքերի վրա պահելու համար: Վերանշանակումից հետո այս 2,5 ամիսները մարզի համար բովանդակ ու հագեցած ընթացք ունեցան, քանզի մարզպետը տիրապետում էր խնդիրներին: Նրա հետ մի շարք հարցերի շուրջ հարցազրույց ունեցանք:

‘Գործընթաց’- Պարոն Ս. Խաչատրյան, իշխանության տարբեր ճյուղերում ունեք տարիների փորձ, նաև պետական ծառայողի մասնագիտական որակավորում՝ ի թիվս աշխատանքում Ձեր պրոֆեսիոնալիզմը հավաստող կարողությունների, և լիովին սպասելի էր սեպտեմբերի 25-ի՝ Ձեր վերանշանակման մասին գործադրի որոշումը: Որքանով հայտնի է, այս ընթացքում (վերջին 1 տարի) շարունակել եք պահպանել կայուն կապը սյունեցիների հետ, կատարել նաև մի շարք բարերար ձեռնարկումներ՝ ի շահ հայրենիքի: Կխնդրեմ, գոնե համառոտ խոսենք դրանց շուրջ:

Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետի պաշտոնից ազատվեցի դիմումիս համաձայն, սակայն որպես սյունեցի ոչ միայն չկտրվեցի Սյունիքից, այլև շարունակեցի այն ծրագրերը, որոնք արդեն ընթացքի մեջ էին, ինչպես նաև սկսեցի նոր ձեռնարկումներ, որոնց անհրաժեշտությունն ու կարիքը զգացվում էր մարզի տարբեր համայնքներում: Դրանց թվում՝ իրականացրել եմ բազմաթիվ ընտանիքների սոցիալական աջակցություն, համայնքային ճանապարհների վերանորոգում, Գորիսի կենտրոնական հրապարակի նորոգումը, զոհված ազատամարտիկների հուշահամալիրի կառուցումը և այլն: Միաժամանակ, որպես ՀՀԿ մարզային կառույցի ղեկավար, համախմբել եմ կուսակցական ողջ ներուժը Սյունիքի առջև ծառայած խնդիրների լուծման համար: Հանդիսանալով ԵԿՄ Սյունիքի մարզային կառույցի ղեկավար՝ իրականացրել եմ երկրապահ ուժերի համախմբմանն ու մարզում հայենասիրական դաստիարակությանն ուղղված աշխատանքներ:

‘Գործընթաց’-Սյունեցիները Ձեզ ջերմ ընդունելությամբ դիմավորեցին Ձեր վերանշանակման առթիվ, ինքներդ էլ հակված եք աշխատելու քաղաքացիների ընդունելության կանոնավոր ռեժիմով՝ սկսած պաշտոնավարման առաջին իսկ օրից, թեպետ օրենքով նման պարտավորություն չունեք: Ի՞նչ խորհուրդ կտաք Ձեր քաղաքական հակառակորդներին, ովքեր, բոլորս գիտենք, որ ընդհանրապես չունեն քաղաքացիների ընդունելության ռեժիմ, էլ ուր մնաց կանոնավոր:

Ս. Խաչատրյան - Եթե որևէ աշխատանք կամ գործունեություն դիտարկվում է պարտավոր եմ կամ պարտավոր չեմ տեսանկյունից, այն արդեն դատապարտված

Է անհաջողության: Ցանկացած բնագավառում գործունեություն ծավալող անձը պետք է ծառայելու կարողություն ունենա, ինչը ենթադրում է նվիրում, հստակ գործունեություն: Իշխանություն-հասարակություն կապն ապահովվում է մի շարք տարբերակներով, այդ թվում՝ մարզի տարբեր համայնքներ ու կառույցներ մեր շրջայցերով, մարզպետարան ուղղվող դիմումներով, նաև քաղաքացիների ընդունելությամբ: Այս 2 ամսում իմ իրավասությունների սահմաններում լուծում եմ տվել 221 քաղաքացիների խնդիրների: Դրանք եղել են ամենատարբեր բնույթի, ինչպես օրինակ՝ հանրակացարանում բնակվելու խնդրի լուծման, վերելակների, տանիքների նորոգման, պետպատվերի շրջանակում բուժման և շատ այլ խնդիրներ: Խորհուրդներ որևէ մեկին տալ չեմ ցանկանում, իսկ երբ աշխատում եմ, որևէ մեկին, որևէ հարցում ապացուցելու նպատակ չեմ հետապնդում: Իմ գործունեության նպատակն է՝ ծառայել Հայաստանի Հանրապետությանն ու իմ ժողովրդին:

‘Գործընթաց’-երբ որոշ աշխատանքներ վստահում, պատվիրակում եք այլ պաշտոնյաների, ինչը դասական իմաստով բնորոշ է ժողովրդավարական կառավարման ոճ ունեցող ղեկավարներին՝ ի տարբերություն ավտորիտար, տոտալիտար ոճի, երբ ղեկավարը փորձում է ամեն ինչ ինքն անել, դարձյալ Ձեր ընդդիմախոսները չեն լուծում: Արդյոք նրանք չեն հասել ծայրահեղության՝ քարոզելով ժողովրդավարականի փոխարեն ավտորիտար ոճ:

Ս. Խաչատրյան - Սյունիքի մարզպետարանի աշխատակիցներն ունեն մասնագիտական բարձր գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ, որոնք թույլ են տալիս մարզպետարանի և մարզի առջև ծառայած խնդիրներն ու ծրագրերը լուծել սեղմ ժամկետներում և բարձր որակով: Որպես մարզպետ, վստահում եմ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմին: Այստեղ բոլոր գործընթացներում տիրում է ՀՀ օրենքներով սահմանված ժողովրդավարության այնպիսի կարգ, որը թույլ է տալիս յուրաքանչյուրին դրսևորելու իր անհատական կարողությունները պաշտոնեական պարտականությունների կատարման շրջանակում:

‘Գործընթաց’-Ձեր առաջնահերթ քայլերից մեկով լայն սպառման և անհրաժեշտության ապրանքների գնանկմանը նպաստող գործակցություն հաստատեցիք մարզի գործարարների հետ: Արդյունքում ընդհանուր հաշվով ամսեկան խնայվում են միլիոնավոր դրամներ՝ ի շահ Գորիսի բնակչության: Ինչպե՞ս ստացվեց այս գործակցությունը:

Ս. Խաչատրյան - Համաձայն ՀՀ Նախագահի՝ մարզերում պետական կառավարման մասին հրամանագրի՝ որպես մարզպետ միջոցներ եմ ձեռնարկել առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտի տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընդլայնման և արդյունավետության ապահովման ուղղությամբ: Հաց արտադրողների հետ աշխատանքային քննարկման ընթացքում, հաշվի առնելով հացի առատ բերքի առկայությունը, ռուսաստանյան ցորենի գնանկումը, այս ամենի հետևանքով այսուրի ինքնարժեքի նվազումն, առաջարկել եմ 500 գրամ հացը դարձնել 600 գրամ և հնարավորության սահմաններում իջեցնել վաճառքի գինը, ինչը և բարեխղճորեն իրականացվել է հացարտադրողների կողմից:

‘Գործընթաց’-Չնայած տնտեսության մեջ ներդրումների ծավալի նվազմանը, Սյունիքում Ձեր պաշտոնավարման այս 2,5 ամսում գործարար միջավայրի բարելավմանն ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված մի շարք ծրագրեր են իրականացվում, հատկապես՝ նպաստում եք արտադրության ոլորտին: Ի՞նչ ծրագրեր են դրանք, ի՞նչ արդյունքներ են սպասվում:

Ս. Խաչատրյան - Խոշոր գործարար ծրագրերից առաջինի մեկնարկն արդեն տրված է, խոսքը Կապանի տարածաշրջանի Սյունիք համայնքում կառուցվող պահածոների գործարանի և կից կառուցվող ջերմոցային տնտեսության մասին է: Այն կապահովի նվազագույնը 250 աշխատատեղ: Սակայն սա դեռ միայն սկիզբն է այն գործարար ծրագրերի, որոնք կարճ ժամանակ անց իրականություն կդառնան Սյունիքի մարզում, մասնավորապես՝ Կապանի տարածաշրջանում: Նախնական հաշվարկներով՝ հաջորդ ծրագրերը մեզ հնարավորություն կտան

բացել հազարավոր աշխատատեղեր, բայց այդ մասին կիսուսնք կոնկրետ կատարված աշխատանքներից և տեսանելի արդյունքներից հետո:

Ուշադրության առանցքում ունենալով մարզի սահմանամերձ համայնքների սոցիալ-կենցաղային խնդիրները՝ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ, ինչպես հայտնի է, օրինակ, Սիսիանի շրջանի Սոֆուլու համայնքին հատկացվել են 15 տոննա ցեմենտ և դրամական միջոցներ՝ ճմռանն ընդառաջ բնակարանները վերանորոգելու համար: Հիմնովին վերանորոգվել են Սիսիան-Սալվարդ, Աշոտավան-Թասիկ ճանապարհահատվածները, ընթացքի մեջ է Աշոտավան-Թասիկ խմելու ջրի ջրատարի կառուցումը: Իսկ պետության կողմից սահմանամերձ համայնքներին ուղղված սոցիալական ծրագրերի թվում Սյունիքի մարզի, օրինակ, Մեղրու շրջանի ջրօգտագործողներին ոռոգման ջրի վարձավճարների գծով կիրառվում է 50 տոկոս զեղչ՝ պետության կողմից փոխհատուցմամբ: Բացի այդ, արդեն իսկ ընդունվել և ՀՀ նախագահի կողմից ստորագրվել է 'Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին' ՀՀ օրենքը՝ որպես տնտեսական զարգացման խթան: 2015թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող այս օրենքի շուրջ կառավարությունը կընդունի որոշում՝ հստակ նշելով սահմանամերձ համայնքների ցանկը: Հավանական է, որ սա կվերաբերվի նաև Սյունիքին՝ որպես սահմանին անմիջական հարակից և Հայաստանի ու Արցախի համար ռազմավարական կարևորության մարզի:

Անդրադառնալով վերջերս Կապանում ջրագծի խոշոր վթարին, որի ժամանակ մինչ Էներգամատակարարման վերականգնումը՝ մարզպետ Ս. Խաչատրյանի նախաձեռնությամբ վառելափայտով ու վառարաններով էին ապահովվել բնակիչները, հարց ուղղեցինք, թե արդյո՞ք 'Հայջրմուղկոյուղ'-ին փոխհատուցել է բնակչության կրած վնասը, նա պատասխանեց.

Ս. Խաչատրյան - Կապան համայնքի ջրամատակարարման, ներքին ցանցի նորացման և մաքրման աշխատանքները մարզկենտրոնում իրականացվող կարևոր ու առաջնային ծրագրերից են: Կապանի ջրագծի վթարային վիճակը բնակիչներին քանիցս աղետալի վիճակների է հասցրել: Նրանց վիճակը բարելավելու համար գործնական քայլեր ձեռնարկեց ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանն, ում անմիջական հանձնարարությամբ և տրամադրած ֆինանսական միջոցներով իրականացվեցին վթարի հետևանքների վերացման աշխատանքներ: Խորին շնորհակալությամբ ուզում եմ նշել, որ 'Հայջրմուղկոյուղի' ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենի, միշտ էլ բարձր պատասխանատվությամբ է մոտեցել ծագած խնդիրներին ու մեր կողմից առաջադրված ջրամատակարարման հետ առնչվող ցանկացած հարց ստացել է շուտափույթ և ամբողջական լուծում, ինչպես նշված վթարի դեպքում:

Ի դեպ, վերջերս լուծում ստացավ ևս մի կարևոր խնդիր՝ Կապանի Լեռնագործների փողոցի N3 հասցեում գտնվող հանրակացարանի անօթևան 12 ընտանիքի բնակապահովման հարցը, որի առնչությամբ նրանք դիմել էին մարզպետ Սուրիկ Խաչատրյանին և խնդրի լուծմանն աջակցելու համար նրան հայտնել իրենց երախտիքը: Նրանք հանրակացարանի սեփականատիրոջն, ով ուներ բնակիչներին տեղից վտարելու դատավճիռ, առաջարկել էին հնարավոր էժան գներով իրենց օտարել հանրակացարանի զբաղեցրած բնակարանները: Այս հարցով Սյունիքի մարզպետը դիմել էր ՀՀ վարչապետին: Կենսական այս խնդիրը հրատապ լուծում ստացավ՝ կառավարության ընդունած որոշմամբ, որով ֆինանսներ կտրամադրվեն բնակարանների գնման համար: Այս առիթով մարզպետ Սուրիկ Խաչատրյանն իր խորին շնորհակալությունը փոխանցեց ՀՀ կառավարությանն՝ ի դեմս վարչապետ Հովիկ Աբրահամյանի:

Հարցազրույցի ամփոփմանը նաև հարց ուղղեցինք Ս.Խաչատրյանին, թե որպես Ազատամարտին մասնակցած կամավորական, հրամանատար՝ ինչպիսի՞ն կգնահատի այսօր ազատամարտիկների ու նրանց համախմբող կառույցի դերն, ասաց.

Ս. Խաչատրյան - Բարձր եմ գնահատում ազատամարտիկներին, նրանց հերոսական պայքարը ոչ միայն արցախյան ազատամարտի հաղթանակի կերտման ժամանակ, այլև նրանց շարունակական ազգանվեր գործունեությունն՝ ուղղված բանակաշինության և հասարակական-տնտեսական կյանքի կայացմանն ու զարգացմանը: Կարևորում եմ մեր բազմադարյա պատմության վերջին հերոսական հաղթանակի ոգով նոր սերնդի դաստիարակության կազմակերպումը, դրանում հասարակության լայն խավերի ներգրավվածությունն ու փոխգործակցությունը: Սյունիքի մարզի ԵԿՄ տարածքային բաժանմունքներից յուրաքանչյուրում գործում են խորհուրդներ, որոնք միավորված են Սյունիքի ԵԿՄ մարզային խորհրդի կազմի մեջ: Մենք մարտական ընկերներ ենք, անցել ենք պատերազմի բովոյվ և միասին պայքարում ենք մեր երկրի ապագայի համար:

‘Գործընթաց’- Այս ընթացքում Դուք հանդիպել եք և՞ եվրոպացի գործընկերների հետ և ՌԴ պատվիրակների, վերջերս էլ ՀՀ ազգային հերոս Ն. Ռիժկովի հետ, որն էլ Հայաստանին բարեմաղթանքներ հղեց Եվրասիական տնտեսական համագործակցության շրջանակում: Ինչպիսիքն է Ձեր գնահատականը ՀՀ արտաքին տնտեսական զարգացումներին:

Ս. Խաչատրյան - ՀՀ Ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովը մեր ժողովրդի լավագույն բարեկամներից է, ով չի կարող անտարբեր լինել այնպիսի մի կարևոր պայմանագրի ստորագրման հարցում, ինչպիսին Եվրասիական տնտեսական համագործակցության պայմանագիրն է: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի վարած ճկուն դիվանագիտության շնորհիվ, այսօր արդեն Եվրասիական տնտեսական համագործակցությունն իրականություն է, որի դրական հետևանքները կարճ ժամանակ անց նկատելի կդառնան մեր հասարակական-տնտեսական զարգացման ու սոցիալական ամենատարբեր խմբերի կենսամակարդակի բարձրացման իրական գործընթացներում: Բնական է, որ մշակվող գործարար ծրագրերի մի ստվար մասը նախատեսվելու և իրականացվելու է հենց այդ համագործակցության տնտեսական հաշվարկների հիմքի վրա, մի նոր թափ հաղորդելով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումներին:

Հարցազրույցն՝ Ի. Դանիելյանի

‘Գործընթաց’ թերթ